

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

ԿԳՆ նախարար պարոն Լևոն Մկրտչյան -ին

**ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ**

Արևիկ Մարգարյան -ից  
(դիմողի անուն, ազգանուն)

Երևան, Կոմիտասի պ., 7/4, բն. 28, 091 40 98 37, [arevikantenna@gmail.com](mailto:arevikantenna@gmail.com)  
(թնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)


**“Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում” ՀԿ, 211.171.03367**  
(կազմակերպության լրիվ անվանումը, պեդ.գրանցման համարը)

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային  
խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ:
2. Մոտիվացիոն նամակ:
3. Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում ԿԳՆ գործունեության և կրթության  
բնագավառում իրականացվող քաղաքականության վերաբերյալ:
4. Քաղվածք ՀԿ Խորհրդի նիստի որոշումից:


Դիմող՝ 

<03> մայիսի 2016 թ.



10679-16  
03 05 16



Ընդունված է՝  
«ՄԵԾԱՅԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ  
ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ»  
հասարակական  
կազմակերպության  
հիմնադիր համաժողովի՝  
«17» մայիսի 2005թ որոշմամբ.

Կազմակերպության նախագահ՝  
  
Ս.Սարգսյան

Տպագրված է 4 օրինակից  
Օրինակ № 3  
Գրանցված է ՀՀ Արդարադատության  
նախարարության իրավաբանական  
անձանց պետական ռեգիստրի  
կենտրոնական մարմնի  
կողմից «10» 06 2005 թ.  
գրանցման N 211.171.03367  
վկայականի N 030 069114  
Պետական ռեգիստրի ղեկավար՝


  


# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ


«ՄԵԾԱՅԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ  
ՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ»


ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

*Handwritten notes:*  
Քաղաքացիական  
ՏԻԿ  
Մեծ  
03.05.2005



ԵՐԵՎԱՆ 2005





- 2010 թվականի հունիսին մենք կազմակերպեցինք Երևանում Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիայի, ՄԿԵԱ (EAEA)<sup>1</sup> Գլխավոր համաժողովը (General Assembly) և «Մասնագիտական կրթությունը և ուսումնառությունը մեծահասակների և երիտասարդների համար» միջազգային կոնֆերանս:
- Մեծահասակների կրթության (անդրագոգիկա) գիտական դպրոցի հիմնումը Հայաստանում:


Մենք շարունակում ենք մեծահասակների կրթության (ՄԿ) և հարատև/ցկյանս ուսումնառության (ՀՈԻ) ոլորտում ազգային մակարդակի գերազույն նշանակություն ունեցող, Հարավային Կովկասի տարածաշրջանում առաջատար դեր տանող, Եվրոպական համանուն ասոցիացիայի անդամ կազմակերպություն լինել:

Կարող ենք հպարտությամբ արձանագրել մեր դրամաշնորհային աշխատանքային խմբի վերջին տարիների հաջողությունները:

1. 2014 թվ. վերջին եռամսյակում Իջևանի ՄԿ կենտրոնում “Տնտեսական զարթոնք” ծրագրի իրականացման համար Հայաստանի երիտասարդական հիմնադրամը տրամադրեց մոտ 1 մլն. դրամաշնորհ:
2. Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ (ԳԷՀ) / Միացյալ ազգերի զարգացման ծրագիր (ՄԱԶԾ) «Գլոբալ բնապահպանական օգուտների առաջացումը շահառուների էկոլոգիական կրթության և իրազեկման միջոցով» նախապատրաստական ծրագիր/ շուրջ 7000 դոլար, 2014 թվ. նոյեմբեր-դեկտեմբեր/:
3. Եվրոպական դրամաշնորհային ծրագրերին հայտեր ներկայացնելու անթիվ անհաջողություններից հետո մեր ասոցիացիան վերջապես արժանացավ Erasmus+KA2 “*IRemember*” անունով դրամաշնորհի: Այդ ծրագրի խմբի ղեկավարն է Իտալական մի կազմակերպություն, ընդգրկված են 7 երկրներից գործընկերներ: *iRemember* ծրագիրը նախատեսում է կիսել փորձը, հարմարեցնել և փորձարկել եվրոպական մակարդակում «հուշերի լաբորատորիաները», այսինքն միջսերնդային հաղորդակցման լաբորատոր մի մոդել (այն ներառում է

<sup>1</sup> EAEA-ն (European Association for the Education of Adults, Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիա) եվրոպական հասարակական (ոչ պետական) կազմակերպություն է, որը միավորում է 131 անդամ կազմակերպություններ 41 երկրներից, որոնք աշխատում են մեծահասակների կրթության ոլորտում և ներկայացնում շուրջ 60 մլն սովորողներ ողջ Եվրոպայով:





## ՏԵՂԵԿԱՆՔ

### ՄԿՆՈՒՈՎԸ ՀԿ գործունեության մասին

«Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» (ՄԿՆՈՒՈՎԸ) ՀԿ-ը իր գործունեությունը սկսել է 2004 թվականից, պետական գրանցում ստացել է 2005 թվին և միավորում է կրթության ոլորտում գործող պետական, մասնավոր և հասարակական կազմակերպությունների ղեկավարներին և մասնագետներին:


Գիտակցելով, որ ողջ կյանքի ընթացքում ուսումնառությունը գիտելիքահենք հասարակության կառուցման ամենակարևոր պայմաններից մեկն է, մեր կազմակերպությունը իր ողջ ներուժը տրամադրում է, համատեղելով գործընկերների ջանքերը՝ արդի հասարակությունում անձի հասարակական, մասնագիտական, մշակութային, սոցիալական պահանջներին համապատասխանող Հայաստանի Հանրապետությունում մեծահասակների կրթության արդյունավետ համակարգի ինստիտուցիոնալ զարգացման համար:

ՄԿՆՈՒՈՎԸ ասոցիացիայի աշխատանքներից են.

- Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի և խորհուրդի դերի, նպատակների քննարկման և ստեղծումն անմիջական մասնակցությունը, 2007թ.
- Նախնական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարության և օրենքի քննարկումներին և մշակմանն անմիջական մասնակցությունը, 2005-2007 թթ.
- «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպությունը նախաձեռնել է և մասնակցել «Ցկյանս ուսումնառության» հայեցակարգի և Հարասն ուսումնառության ռազմավարության ստեղծմանը, 2009-2013 թթ.
- «Մեծահասակների կրթության շաբաթ» ամենամյա միջոցառման կազմակերպում և իրագործում 2004, 2005, 2006, 2007, 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013 թթ.
- «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» երկլեզու հանդեսի հրատարակում, 2008-2011 թթ.







«Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» ՀԿ

ՀՀ, Երևան, Կոմիտասի պ., 7/4, 28,  
հեռ./ֆաքս՝ 56 23 36  
[arevikantenna@gmail.com](mailto:arevikantenna@gmail.com)  
[www.mku.am](http://www.mku.am)


ուսուցիչներին/ դասախոսներին, ուսանողներին և տարեցներին), որի նպատակն է թարմացնել ուսուցիչների/թրեյներների հմտությունները և բարելավել այլընտրանքային և ոչ ֆորմալ պատմության ուսուցման գործընթացը դպրոցներում: Յուրաքանչյուր երկրում «հուշերի լաբորատորիան» կքննարկի հակամարտության թեմա (օրինակ, կոմունիզմից անցումը շուկայական տնտեսության՝ Ռուսիայում, «դժվարություններ»՝ Հյուսիսային Իռլանդիայում, պարտադրված միգրացիայի պայմաններում ազգային ինքնության պահպանումը՝ Հայաստանում, և այլն ..), այնուհետև միջտերմային լաբորատորիաների ստացված արդյունքները վիրտուալացված կլինեն և կտեղադրվեն The Land օնլայն հարթակում, և այդպիսով հասանելի կդառնան հանրությանը / 2015-2016 թթ./:

- 4. Fundacja „Zielony Słoń” Լեհաստանյան կազմակերպությունը հրավիրել էր մեր ասոցիացիայից 4 հոգի մասնակցել իր Erasmus+KA1 "Educational tools exchange" երիտասարդների հետ աշխատող թրեյներների թրեյնինգի / 2015 թվ. մայիս/:


Եզակի ծրագիրը, որը հետևողական և հաջողությամբ իրագործվում է առանց որևէ ֆինանսական աջակցության՝ դա *"Ճանաչել իմաստություն"* խորագրով մեր և "ԱՐԱԲԷ" հիմնադրամի հայագիտական սեմինարների շարքն է – շուրջ 200 հանդիպում չորս տարիների ընթացքում / ծրագրի ղեկավար՝ Յուրա Մարգարյան/: Անհրաժեշտ է շնորհակալությամբ նշել Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, սեմինարների համար տարածք տրամադրելու իր աջակցությամբ: Սեմինարները կրում են ճանաչողական և լուսավորչական բնույթ, լսարանն ընդգրկում է տարբեր տարիքի և զբաղմունքի անձանց:


ՄԿՆՈՒՈԿԸ ՀԿ-ը համարվում է ՀՀ ԿԳՆ ռազմավարական գործընկեր կազմակերպություն: Հատկապես կարևոր է մեզ համար ԿԳՆ լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի հետ սերտ համագործակցությունը:

Արևիկ Սարգսյան  
Նախագահ  
«Մեծահասակների կրթություն և  
ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում»



01.05.2016





## Մոտիվացիոն նամակ


“Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում” հասարակական կազմակերպության նախագահ Արևիկ Սարգսյանը 2009-2016 թթ. ժամանակահատվածում հանդիսացել է ՀՀ ԿԳՆ նախագահին կից կոլեգիայի անդամ որպես ՀՀ Կայուն զարգացման ծրագրի քաղաքացիական համագործակցության ցանցի (ԿԶԾ ՔՀՑ) Մարդու իրավունքների ոլորտային խմբի ներկայացուցիչ:

Մեր կազմակերպության համար համագործակցության նման մեխանիզմը շատ արդյունավետ էր: Անկասկած արդյունավետ էր այն նաև կրթության և գիտության ոլորտում աշխատող ՔՀՑ այլ հասարակական կազմակերպությունների համար: ԿԳՆ-ում վերջին տարիներին տեղի ունեցած բոլոր ռազմավարական ծրագրերին իրազեկվել են ՔՀՑ համապատասխան ոլորտային խմբի բոլոր կազմակերպությունները և Ցանցի կառավարման մարմինները: Մի շարք ծրագրերի մշակման փուլում, հանրային քննարկման փուլերում այդպիսով իրենց մասնակցությունն ունենալու հնարավորությունը ստացան Ցանցում ընդգրկված քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: Մյուս կողմից, ոլորտում տեղի ունեցող զարգացումներին ձկուն արձագանքելու հնարավորության ընդլայնումը, առանց ֆինանսական պարտավորությունների բարձրակարգ փորձագիտական ծառայություններ ստանալու հնարավորությունը – սա է Հայաստանի կառավարության՝ ի դեմս ԿԳՆ-յան գրանցած շահը:

Հավատացեք անկեղծությանս, փոխհարգալից գործընկերական գործնական հարաբերությունները շատ ու շատ հաջողությունների գրավական դարձան և կդառնան դեռ ապագայում, եթե ԿԳՆ նախարարը ընդգրկի ՄԿԵՆՈՒՈԿԸ ՀԿ-ն ներկայացուցչին նախարարության նորաստեղծ Հասարակական խորհրդի կազմում:

Արևիկ Սարգսյան  
Նախագահ  
«Մեծահասակների կրթություն և  
ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» ՀԿ

03.05. 2016



---

ՀՀ ԿԳՆ նախարարության  
գործունեության և  
կրթության բնագավառում  
իրականացվող  
քաղաքականության  
վերաբերյալ հակիրճ  
վերլուծություն

---

“Մեծահասակների կրթություն և  
ուսումնառություն ողջ կյանքի  
ընթացքում” ՀԿ

---

Տ.գ.թ., ՀԱՊՀ դոցենտ՝ Արևիկ Սարգսյան

---





“Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում” ՀԿ գործունեությունը առնչվում է *ոչ ֆորմալ և ինֆորմալ մասնագիտական և ոչ մասնագիտական կրթության և ուսումնառության հարցերին*, ուստի վերլուծության ենթ ենթարկել ՀՀ ԿԳՆ գործունեությունը և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականությունը այն ոլորտում, որում մեր կազմակերպության փորձը և փորձագիտական կոմպետենտությունը անկասկած է և իրատեսական:

Այդ հարցերի շրջանակը ՀՀ ԿԳՆ Լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի պատասխանատվության տակ է սկսած այդ բաժնի հիմնադրման օրվանից: Բաժնի վերջին երեք տարիների գործունեությունը ծավալուն է: Կարելի է առանձնացնել մի քանի աշխատանք, որոնց այս կամ այն կերպ առընչություն է ունեցել նաև մեր ասոցիացիան:

1. Հայաստանում ոչ ֆորմալ կրթության համակարգի անդրանիկ ուսումնասիրությունը կատարվեց մեր ասոցիացիայի և ԿԳՆ համատեղ նախաձեռնությամբ 2011 թվականին: Կողմերը պայմանավորվել էին բաժանել աշխատանքը. Նախարարությունը ուսումնասիրեց պետական կրթական հաստատություններում ոչ ֆորմալ եղանակով իրականացվող ուսուցումը, իսկ ասոցացիան իր վրա վերցրեց ոչ ֆորմալ եղանակով իրականացվող ոչ պետական ուսումնական և այլ կազմակերպություններում, “ուստա-աշկերտական” և կրկնուսույցների կողմից իրականացվող ուսումնառության հետազոտման պատասխանատվությունը:

Հայաստանում առաջին անգամ իրականացվեց մեծահասակների կրթության բնագավառում վերլուծական հետազոտություն, որում ուսումնասիրվել էին ոչ ֆորմալ կրթության ֆինանսավորման հարցերը, վերլուծվել էր ՀՀ բոլոր մարզերում բնակչության մասնակցությունը մեծահասակների կրթությանը և ուսումնառությանը: Այդպես, 2010թ. տվյալներով ոչ ֆորմալ դասընթացների է մասնակցել է շուրջ 11.000



մարդ, որից 3.150-ը՝ Երևանում, իսկ 7.850-ը՝ մարզերում: Կանանց թիվը կազմել է համապատասխանաբար՝ 1.953 (62%) և 4.757 (60,6%) մարդ:

Ոչ ֆորմալ եղանակով կրթության իրականացման մեկ այլ տեսակ է գիտելիքների և հմտությունների փոխանցման այսպես կոչված “ուստա-աշկերտ” ավանդական ճանապարհը:

Մասնավոր վարպետների մոտ սովորելու երևույթը հայ իրականության մեջ պատմական, ավանդութային խորը արմատներ ունի: Այն դարեր շարունակ եղել է մասնագիտական գիտելիքների և հմտությունների ձևավորման կարևորագույն միջոցը: Ուստի դրա արդի լայն տարածվածությունը մեծապես պայմանավորված է նաև հայ ժողովրդի նյութական մշակույթի և կենցաղի ավանդույթներով:

Անկասկած, ներկա պայմաններում Հայաստանում արհեստագործության ոլորտում տարածված այդ ուսուցման երևույթի ուսումնասիրությունը երկրի համար ունի սոցիալական և տնտեսական կարևոր նշանակություն: Տնտեսության որոշ ոլորտներում և կրթության համակարգում “ուստա-աշկերտ” բնույթի ուսուցումը պայմանավորում է կադրերի մասնագիտական որոշակի որակ՝ այստեղից բխող իր բազմաթիվ ու բազմաբնույթ դրական հետևանքներով: Մակայն այդ ավանդական ուսման ձևը, որը մեր օրերում, փաստորեն, “սովերային” է (տնտեսավարման տեսանկյունիցէ հարկերը չեն վճարվում) կարիք ունի օրենսդրական դաշտ վերադառնալու (մի գուցե արտոնյալ պայմաններով):

Ներկայացվող հետազոտության շրջանակներում լուրջ լայնածավալ սոցիոլոգիական ուսումնասիրություն իրագործելը հնարավոր չէր, ուստի տվյալների հավաքագրման և մշակման համար կիրառվել է սոցիոլոգիայում հայտնի «ընտրովի զննման» մեթոդը:

Ընտրովի զննման մեթոդը կիրառվել է թե՛ Երևանում, թե՛ այլ քաղաքներում: Ամբողջ երկրում տիրող իրավիճակի պատկերը ստանալու համար մաթեմատիկական





էքստրապոլյացիայի մեթոդի կիրառմամբ, ընդարձակելով մասնակին ընդհանուրի դիտարկման համար, ստացանք հետևյալ արդյունքը:

Հայաստանում աշկերտության եղանակով ուսումնառություն է ստանում տարեկան շուրջ 15.000 մարդ, որոնք վարպետներին վճարում են ընդհանուր ծավալով՝ 2 մլրդ 810 մլն ՀՀ դրամ:

Ստվերային ուսուցման երևույթի տարածվածության աստիճանի բազմակողմանի վերլուծության նպատակով անհրաժեշտ է հարցը դիտարկել պատմական տեսանկյունից: Վարպետի մոտ սովորելու երևույթի պատճառները պետք է փնտրել նաև ֆորմալ կրթական համակարգի անկատարության մեջ: Ստվերային ուսուցման տարածվածության աստիճանն ու զարգացման միտումները մեծապես պայմանավորված են նաև բուն ուսուցման գործընթացի հետ կապված գործոններով՝ մասնագիտության ընտրության, մասնավոր վարպետի մոտ աշակերտելու դրդապատճառներով, ուսուցման պայմաններով, հաղորդվող գիտելիքների կառուցվածքով, որակով և այլն: Արհեստագործության որոշ ոլորտներում՝ աշկերտությունն աշխատանքային ռեսուրսների ձևավորման, կադրերի մասնագիտական ուսուցման հիմնական միջոց է:

Ստվերային ուսուցման տարածման վրա ազդող կարևոր գործոններից է մասնագիտական ուսումնական պետական հաստատությունների (քոլեջների) վերաբերյալ գոյություն ունեցող հասարակական կարծիքը: Տարածված կարծիքն այն է, որ այդ հաստատությունները չեն ապահովում գործնական գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակ և սահմանափակվում են հիմնականում տեսական գիտելիքներով: Սրանով է, թերևս, պայմանավորվում այն, որ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողները նախընտրում են զգալի գումար մուծել և սովորել մասնավոր վարպետի մոտ, այլ ոչ թե պետական մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Երկրի սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման ապահովման նպատակով ցանկալի է ուսումնարանների և քոլեջների մասնագիտական կրթության ծրագրեր (ՄԿԾ) կազմելիս ուսանողների գործնական և ինքնուրույն պարապմունքների ժամերը իրենց ողջ ծավալով, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը կազմակերպել անմիջապես արտադրությունում, օրինակ, վարպետների արհեստանոցներում: Այդպիսով վարպետները, որպես կադրային անփոխարինելի պոտենցիալ բնականորեն կդառնան երկրի ՄԿՈԻ համակարգի մեջ ներառված միավորներ: Ի դեպ, այդպես է իրագործվում նախնական և միջին մասնագիտական կրթությունը Դանիայում, որի կրթական համակարգը ճանաչվել էր 2010 թվականին լավագույնն աշխարհում:

Վերոգրյալ ուսումնասիրության արդյունքները, ելնելով Հայաստանում՝ մասնավորապես գյուղական շրջաններում տարածված զանազան արհեստների առկայության փաստից, կարելի է համարել, որպես նախնական, կողմնորոշիչ ապագա ուսումնասիրությունների համար, քանի որ քննարկված հարցերը խիստ տարողունակ են և մեկ հետազոտությամբ օբյեկտիվորեն չեն կարող լիարժեք նկարագրված լինել: Հետագա, ավելի լայնածավալ ուսումնասիրությունները թույլ կտան բացահայտել Հայաստանի արհեստավորության սոցիալական ամբողջ բնութագիրը, գտնել այն ուղիները, որոնք կարող են նպաստել արհեստագործության կրթական ուսուցման գործընթացի կազմակերպմանը՝ արտադրության և սպասարկման հետ դրանց ներդաշնակ զուգորդման տեսանկյունից, ուրվագծել այն ուղիները, որոնք կարող են նպաստել առանձին մարզերում դարավոր ավանդույթներ ունեցող առանձին արհեստների վերականգնմանն ու զարգացմանը:

Ոչ ֆորմալ կրթության եղանակով իրականացվող ուսումնառության դասին է պատկանում նաև գիտելիքի և հմտության փոխանցումը կրկնուսույցների միջոցով: Հիմնվելով ոչ ֆորմալ կրթության ոլորտում մեր կողմից իրականացված վերջին ուսումնասիրությունների [1] տվյալներն՝ Հայաստանում տարեկան շուրջ 140000 մարդ է գնում կրկնուսույցների ծառայություններ տարբեր առարկաներից և վճարում





դրանց համար շուրջ 40 միլիարդ դրամ: Հաշվի առնելով, որ ԿԳՆ 2010 թվականի բյուջեն կազմում էր 98050 միլիոն դրամ՝ անհրաժեշտ է փաստել, որ կրթության վրա ծախսված մասնավոր միջոցները հավասար են պետական միջոցների մոտ կեսին:

2. Լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի կողմից 2014 թ. մշակվել է մինչև 2020 թվականը Հայաստանի մեծահասակների կրթության և հարստության ուսումնառության (ՄԿ և ՀՈԻ) համակարգի հեռանկարային զարգացման ծրագրի նախագիծը, որի հիմք էր հանդիսացել 2011-12 թվ. «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» հասարակական կազմակերպության ծրագրերից մեկի շրջանակներում մշակված փաթեթը [4]: Հարկ է նշել նաև, որ սույն ծրագիրը համահունչ է Կառավարությունում վերջերս հաստատված ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի (ՀԶԾ) համապատասխան բաժնի դրույթներին (ՀԶԾ Քաղաքացիական հասարակության ցանցի փորձագետի կարգավիճակում Ա.Սարգսյանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել այդ ՀՀ գլխավոր ռազմավարական ծրագրի լրամշակման և խմբագրման գործում):

3. CONFINTEA VI-ից հետո Հայաստանի երկրորդ ազգային հաշվետվությունը վերջերս կազմվեց համատեղ մեր ասոցիացիայի հետ և ներկայացվեց ՅՈՒՆԵՍԿՈ:

4. Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման համակարգի ներդրման ուսումնասիրությունը առաջին անգամ մեր երկրում կատարվել էր Եվրոպական կրթական հիմնադրամի պատվերով Ա.Սարգսյանի կողմից 2011 թվականին: Վերջին տարիներին ՀՀ ԿԳՆ լրացուցիչ և շարունակական կրթության բաժնում մշակել են 2013-2017 թվականների Հայաստանի Հանրապետության լրացուցիչ եվ շարունակական կրթության ռազմավարության նախագիծը: Ինչպես և առաջարկված էր անդրանիկ վերլուծության մեջ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության (կամ կյանքի ընթացքում ձեռք բերված) արդյունքների, կարողությունների ու հմտությունների ճանաչումը, վավերացումը նախատեսվում է առաջիկայում հանձնարարել ոլորտի կարգավորման և աջակցության նպատակով ՀՀ կառավարության կողմից՝ ԵՄ-ՀՀ



գործընկերության և աջակցության ծրագրերի շրջանակներում ստեղծված Ուսուցման ազգային հիմնադրամին (ՈԻԱՀ):

5. ՀՀ կրթության զարգացման 2016-2025թթ. Պետական ծրագրում լրացուցիչ և շարունակական կրթության վերաբերող հասվածների կազմումը, քննարկումը և խմբագրական առաջարկների դիտարկումը դարձավ մեր ասոցիացիայի և նախարարության համագործակցության դրսևորման ևս մեկ ասպարեզ:

6. ՄԿ ոլորտում տեսական և գործնական բնույթի չլուծված խնդիրներ

1) Արդի պայմաններում անհրաժեշտ է մեծահասակների կրթության մասնագիտության ինստիտուցիոնալացումը, ասել է թե տվյալ մասնագիտության ճանաչումը, անդրագոգիկայի հայկական գիտական դպրոցի ձևավորումն իր ուղղություններով: Կարևոր է նաև լուծել մասնագետների սոցիալական խորշի հարցը: Ինստիտուցիոնալացմանը կնպաստի նաև ՄԿ մասնագետների ինտեգրումը կրթական համակարգում պետական ներգրավվածության և հասարակական կարծիքի ստեղծման միջոցով:

2) Մեծահասակների մասնագիտական կրթությունը համալրելու և առավել օգտակար դարձնելու նպատակով հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ ուսուցանվողը նեղ մասնագիտության ստանալուն զուգահեռ հարաբերի իր զարգացումը նաև սոսկ դասական հումանիտար կրթության ազդեցությամբ: Սրանով մենք ուզում ենք բացահայտել անհրաժեշտ լուծում պահանջող մասնագետների գիտելիքների հումանիզացման խնդիրը:

3) Խնդիր կա խթանելու ՄԿ և ՀՈԻ ոլորտի վերլուծական խոր հետազոտությունների կատարումը, վերջապես լուրջ քաղաքականություն խնդրո հարցի շուրջ մշակելու նպատակով, զուգահեռ ապահովելով որոշակի պետական ֆինանսական հատկացումներ:

4) Ոչ ֆորմալ և ինֆորմալ եղանակով ձեռք բերված կրթության ճանաչումն ու վավերացումը նույնպես շարունակում է մնալ չլուծված խնդիրներից մեկը:



5) ՀՈԻ համակարգի գործառույթների դասին է պատկանում մասնագիտությունների կարգավորումը պետության կողմից: Մեր երկրում մասնագիտական գործունեության ծավալման իրավունքի համար հատուկ լիցենզիա է պահանջվում միայն մի շարք մասնագիտությունների դեպքում, օրինակ ֆինանսական և հաշվապահական աուդիտ իրականացնելը: Բացի դրանից ՀՀ Կառավարության կողմից նախատեսված է մասնագիտությունների մի ցանկ, որոնք մոտ ժամանակներում կդասվեն որպես պետության կողմից կարգավորվող (regulated) մասնագիտություններ: Կարգավորվող մասնագիտությունների ցանկում առաջին հերթին են հացթուխի, հրուշակագործի, բարմենի և մի քանի այլ մասնագիտություններ: Դեռ վերջնականապես մշակված չէ մասնագիտությունների պետական կարգավորման և մշտադիտարկման գործընթացի մոդելը: Ավելի շատ են հարցականները, քան պատասխանները: Կարգավորվող մասնագիտությունների խնդիրը կարելի է արդյունավետ լուծել ոչ ֆորմալ և ինֆորմալ եղանակով ձեռք բերված կրթության ճանաչման և վավերացման գործընթացներին զուգահեռ:

6) Անպատճառ կարևոր խնդիրներից է շարունակում մնալ պրակտիկ անդրագոգիկայի հմտություններին տիրապետող արհեստավարժ մասնագետների քանակի սակավությունը և ՄԿ մեթոդաբանության և տեխնիկաների տարածման գործը:

7) Անհրաժեշտ է նշել, որ ՄԿ և ՀՈւ բնագավառում մեկ անգամ եվրոպական CEDEFOP կազմակերպությունը փորձ է կատարել մշակել մասնագիտական բառարան [2], սակայն տերմինների անհստակությունը աշխարհում դեռ ակնհայտ է:


ՀՀ պաշտոնական տերմինաբանության և մանկավարժության մասնագիտական ոլորտներում կիրառման համար առաջարկվել են [3] շուրջ 30 հասկացություններ և նրանց համարժեքները միջազգային ընդունված տերմինաբանության մեջ: Տերմինաբանության հստակեցման աշխատանքները անհրաժեշտ է շարունակել:



## Օգտագործված գրականություն

1. Երիտասարդների և մեծահասակների ոչ ֆորմալ կրթության ազգային (միջանկյալ) զեկույց, ՄԿՈՒՈԿԸ հ/կ, 2011
2. Terminology of European education and training policy // European Centre for the Development of Vocational Training, 2008
3. Ա.Սարգսյան “Մեծահասակների կրթություն. մեթոդներ և գործողություններ”, Երևան, 2016, 435 էջ:
4. <http://mku.am/archive.php>





«Մեծահասակների կրթություն և ուսումնառություն  
ողջ կյանքի ընթացքում» ՀԿ


ՀՀ, Երևան, Կոմիտասի պ., 7/4, 28,  
հեռ./ֆաքս՝ 56 23 36  
[arevikantenna@gmail.com](mailto:arevikantenna@gmail.com)  
[www.mku.am](http://www.mku.am)

## ՔԱՂՎԱԾՔ

ՄԿՆՈՈՒԿԸ ՀԿ Խորհրդի նիստի որոշումից (01.05.2016)

“Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում” հասարակական կազմակերպության Խորհուրդը սույն թվականի մայիսի մեկին կայացած նիստում որոշեց, որ Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում” հասարակական կազմակերպությունը մասնակցելու է ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար մրցույթին: Խորհուրդը հանձնարարում է կազմակերպության նախագահ Արևիկ Սարգսյանին պատրաստել անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը և դիմել ԿԳՆ Հասարակական խորհրդի անդամության համար:

Արևիկ Սարգսյան  
Նախագահ  
«Մեծահասակների կրթություն և  
ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում»



01.05.2016

